Հավելված
Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2006 թվականի ապրիլի 14 -ի
№ 50L որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառներում և ջրային համակարգում կարգավորող մարմին է, որը գործում է ,Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին, ,էներգետիկայի մասին, ,էլեկտրոնային հաղորդակցության մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2005 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝	հանձնաժողովի նախագահ
Նիկոլայ Գրիգորյան՝	հանձնաժողովի նախագահի տեղակալ
Շիրազ Կիրակոսյան՝	հանձնաժողովի անդամ
Սամվել Արաբաջյան՝	հանձնաժողովի անդամ
Մուշեղ Կոշեցյան՝	հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով (89 աշխատող, այդ թվում՝ 57 քաղաքացիական ծառայող), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  - ա) սակագնային բաժին,
  - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային

ծրագրերի վարչություն՝

ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,

բ) ներդրումային ծրագրերի բաժին,

- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- վարչատնտեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1.Կարգավորման իրավական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովի 2005 թվականի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների կատարելագործման միջոցով բարեփոխումների շարունակելիության ապահովումն էր:

Նպատակ ունենալով կատարելագործելու նաև Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերը, հանձնաժողովը հաստատել է էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի (արտադրող-արտահանող) և էլեկտրաէներգիայի առուվաճառքի լրացուցիչ (հաշվեկշռող) պայմանագրերի, հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման (արտահանող-հաշվարկային կենտրոն) պայմանագրի, էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման (արտահանող-հաղորդող) պայմանագրի և էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման (արտահանող-համակարգի օպերատոր) պայամանագրի օրինակելի ձևեր:

Արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիա ունեցող անձի կողմից կարգաբերման-գործարկման աշխատանքների արդյունքում առաքված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարման հետ կապված հարցերը կանոնակարգելու նպատակով հանձնաժողովը հաստատել է կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման պայմանագրի օրինակելի ձևը:

Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելուց հետո հաստատվել է նաև կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (բնակիչ) պայմանագրի օրինակելի ձևը, որով սահմանվել են բնական գազի մատակարարման, այդ թվում՝

բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, պայմանները, մատակարարի և բաժանորդի (բնակչի) իրավունքներն ու պարտականությունները:

Մշակվել են նաև բազմաբնակարան շենքում գործող բաժանորդի և կենցաղային սպառում ունեցող բաժանորդի բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (կազմակերպություն) պայմանագրի և բնական գազի մատակարարման (մատակարար-ոչ կենցաղային սպառում ունեցող բաժանորդ) պայմանագրի օրինակելի ձևերի նախագծերը:

Հանձնաժողովը գործնական մասնակցություն է ունեցել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ձրային համակարգի կարգավորման մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին:

Էներգետիկայի բնագավառում աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով 2005 թվականի ընթացքում հանձնաժողովը մշակել և հաստատել է մի շարք լոկալ իրավական ակտեր, իրականացրել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի առուվաճառքի (ծառայությունների մատուցման) 94 պայմանագրերի փորձաքննություն և գրանցում:

Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է նաև Երևանի «Ձրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարձակալության տրամադրման համար իրականցվող մրցույթի փաստաթղթերի փաթեթի նախապատրաստման աշխատանքներին: 2005 թվականին հաստատել է ապագա վարձակալին տրվող ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանները:

2.Լիցենզավորում

Հանձնաժողովը 2005 թվականի ընթացքում ստացել է լիցենզավորման 39 հայտեր, որոնց քննարկումներից հետո տրվել են փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 29, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 5, հողմային էլեկտրակայանի կառուցման՝ 1, հողմային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 1, շոգեգազային կոմբինացված ցիկլով աշխատող էներգաբլոկի կառուցման՝ 1, ջերմային էներգիայի բաշխման՝ 1 և էլեկտրական էներգիայի արտահանման՝ 1 լիցենզիաներ:

Ստացվել են լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման վերաբերյալ 21 հայտեր, լիցենզիաների վերաձևակերպման՝ 3, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն և գույքն օտարելուն համաձայնություն ստանալու՝ 5, լիցենզավորված անձանց բաժնետերերի փոփոխության՝ 2, լիցենզիայի պայմանների փոփոխության՝ 2 դիմումներ, որոնք բավարարվել են: Միաժամանակ, ուժը կորցրած են ճանաչվել նախկինում տրված 4 լիցենզիաներ:

Հայտերի և դիմումների ուսումնասիրության արդյունքում ընդունվել են համապատասխան որոշումներ, տրված գործունեության լիցենզիաների համար մշակվել և հաստատվել են գործունեության պայմաններ:

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների, 2005 թվականի ընթացքում հանձնաժողովը քննության է առել ջրային համակարգերի օգտագործման թույլտվություն ստանալու վերաբերյալ 7 ընկերությունների հայտեր: Մշակվել են ընկերություններին տրամադրվելիք ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների պայմանների նախագծերը, սահմանված կարգով տեղի են ունեցել հասարակական ծանուցումներ, նախագծերի հանրային քննարկումներ, որից հետո միայն բոլոր ընկերություններին տրամադրվել են ջրային համակարգերի օգտագործման թույլտվություններ և հաստատվել գործունեության իրականացման պայմանները:

Լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով 2005 թվականին հանձնաժողովի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել «Արգիշտի-1» ՍՊԸ-ի փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման N0096 լիցենզիան և, որպես ֆինանսական տույժ, ընկերությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցել 4,0 մլն դրամ, իսկ հանձնաժողովի հաստատած՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ

վերականգման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման նոր կարգի համաձայն՝ լիցենզիաների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պատճառով, հանձնաժողովի որոշումների հիման վրա, որպես ֆինանսական տույժ լիցենզավորված անձանց՝ «Ռինէ», «Սյունիք», «Լեռ էքս» ՍՊԸ-ների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել համապատասխանաբար՝ 250,0 հազար, 1,0 մլն և 2,75 մլն դրամ:

2005 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման, դրանց գործողությունների ժամկետների երկարաձգման համար տուրքերի գանձման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել շուրջ 229,8 մլն դրամ պետական տուրք:

3. Սակագնային քաղաքականություն

1. էներգետիկայի բնագավառ.

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում ներկայացված հայտերի հիման վրա վերանայել է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից առաքվող ջերմային էներգիայի և կենտրոնացված ջեռուցման, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի, ինչպես նաև Հրազդանի քաղաքային համայնքի «Միկրոշրջանի սպասարկման տնտեսություն» ՓԲԸ-ի կողմից առաքվող ջերմային էներգիայի սակագները: «ՋորաՀԷԿ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտի հիման վրա սահմանվել է կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Վերլուծելով էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսատնտեսական արդյունքները, հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ վերանայել է «ՀԱԷԿ», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ -ներից, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկայի հաղորդման ծառայության մատուցման սակագները:

2005 թվականին սահմանվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի Լոռու մարզի Պուշկինի լեռնանցքում տեղակայված հողմաէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Փոքր հիդրոէլեկտրակայաններից և հողմաէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկներում ներառված դրամ/ԱՄՆ դոլար

փոխարժեքի ճշգրտման կարգի համաձայն՝ 2005 թվականի ընթացքում վերանայվել են բնական ջրահոսքերի վրա կառուցված՝ «Բազենք» ՓԲԸ-ի «Եղեգիս-1» և «Լեռ և ջուր» ՍՊԸ-ի «Արջուտ-2» փոքր ՀԷԿ-երից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ներկայացված համապատասխան հայտերի հիման վրա սահմանվել են «ԳԳՎ» ՍՊԸ-ի՝ «Վարդան», «Ակինք» ՍՊԸ-ի՝ «Ծաղկավան», «Հ և Գ ՀԷԿ» ՍՊԸ-ի՝ «Շաքի» և «Որոտնա», «Հ.Ա.Գ. Եռյակ» ՍՊԸ-ի՝ «Գառնի-1», «Զանգեզուր-95» արտադրական կոոպերատիվի՝ «Շինուհայր» փոքր ՀԷԿ -երից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Էներգետիկայի բնագավառի սակագների սահմանման և վերանայման հաշվարկներում կիրառելու նպատակով կատարվել են այդ բնագավառի կարգավորվող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական հաշվետվու-թյունների վերլուծություններ, կազմվել են էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2006 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները:

Լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկատնտեսական հաշվետվությունների առավել պարզեցման և հստակեցման, ընդունված սակագների հաշվարկման մեթոդաբանությունների պահանջներին համապատասխանեցման նպատակով 2005 թվականի ընթացքում կատարվել է գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգի և ձևերի, ինչպես նաև սակագների սահմանման և վերանայման կարգով պահանջվող ձևերի լրամշակում:

Հանրապետությունում հիդրոէներգետիկայի զարգացումը խթանելու նկատառումով հանձնաժողովը քննարկել և որոշում է կայացրել խմելու ջրատարների և ոռոգման համակարգերի վրա կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաստատուն մեծություն սահմանելու վերաբերյալ: Խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանվել է 2 ԱՄՆ ցենտ/կՎտժ, իսկ ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 3 ԱՄՆ ցենտ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի: Նշված

սակագները կգործեն էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից՝ 15 տարի ժամկետով:

Հիմք ընդունելով 2005 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջը, հանձնաժողովը հաստատել է հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2006 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել են էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների հաշվարկման մեթոդաբանությունները:

2005 թվականի հուլիս ամսին ընդունված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների կիրարկումն ապահովելու նպատակով հանձնաժողովը մշակել և հաստատել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ -ի կողմից կազմակերպությունների գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման վճարների հաշվարկման, ինչպես նաև բնակչության և բազմաբնակարան շենքերում գործող կազմակերպությունների ներտնային գազասպառման համակարգերի նախագծման, շինհավաքակցման և կարգաբերման աշխատանքների կատարման ծախսերի հաշվարկման մեթոդիկաները: Սահմանվել են բնակչության ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության համար գանձվող վճարները:

2. Ջրային համակարգ.

Հանձնաժողովը 2005 թվականի ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա վերանայել է Երևանի «Ջրմուղ-կոյուղի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից սպառողներին վաճառվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները:

Սահմանվել է 2005 թվականին կազմավորված «Արմավիրի ջրամատակարար» ՓԲԸ-ի կողմից սպառողներին ոռոգման ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը:

Նորաստեղծ «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ -ները 2004 թվականի դեկտեմբերին հանձնաժողով են ներկայացրել խմելու ջրի

մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման հայտեր, որոնք ուսումնասիրվել են և 2005 թվականի սկզբում ընդունվել համապատասխան որոշումներ:

Ջրային համակարգի սակագնային քաղաքականության սկզբունքների կատարելագործմամբ և սակագների սահմանման իրավական և նորմատիվային բազայի բարելավմամբ պայմանավորված՝ հանձնաժողովը մշակել և հաստատել է խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման մեթոդաբանությունները:

Իրականացվել է Երևանի «Ձրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից օգտագործվող ջրային համակարգի օգտագործման իրավունքը մրցույթով վարձակալությամբ փոխանցելու գործընթացը: Հանձնաժողովը մշակել է ապագա վարձակալ ընկերությանը տրվող ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված ընկերության ֆինանսական առաջարկում նշված բազային սակագների ճշգրտման մեթոդաբանությունը:

4. *Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն*

Էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատ-վությունների վերլուծությունը, որպես հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը, հիմք է հանդիսանում ինչպես առանձին ընկերությունների գործունեության, այնպես էլ բնագավառների ամբողջական արդյունքների գնահատման, առկա հիմնախնդիրների բացահայտման ու դրանց լուծմանն ուղղված որոշումների ընդունման և օրենքով հանձնաժողովին վերապահված կարգավորման այլ մեխանիզմների կիրառման համար: Այն առանձնակի կարևորություն է ձեռք բերում սակագների սահմանման և վերանայման, ներդրումային ծրագրերի գնահատման վերաբերյալ հիմնավորված որոշումների ընդունման և լիցենզիայի պայմանների վերահսկման գործառույթների իրականացման համատեքստում:

Հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ ջրային համակարգի և էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունները ներկայացրել են

եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է նրանց ֆինանսական վիճակի վերլուծություն:

Էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունների ֆինանսա-տնտեսական գործունեության ամփոփ վերլուծությունն ընդգրկել է էներգետիկայի բնագավառում արտադրության, ներկրման, արտահանման և սպառման ծավալները, գործունեության ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը, շահագործման ծախսերը, վառելիքի տեսակարար ծախսերը, ինչպես նաև պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության հիմնադրամի հանդեպ պարտավորությունները և այլն:

Բնական գազի մատակարարման համակարգի ընկերություններում ենթահաշիվների համակարգի ներդրման հետ կապված՝ 2005 թվականին հանձնաժողովը մշակել և ներդրել է լիցենզավորված գործունեությանը վերաբերող ֆինանսական հաշվետվու-թյունների նոր ձևեր:

2005 թվականին հանձնաժողովը լրամշակել է գործող և կառուցվող փոքր ՀԷԿ-երի և ջերմամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերն ու դրանց ներկայացման կարգը:

Սակագնային մարժայում ներառվող շահագործման և պահպանման ծախսերը գնահատելու և վաճառվող էլեկտրաէներգիայի միջին մանրածախ սակագինը ճշգրտելու նպատակով հանձնաժողովի աշխատակիցները համապատասխան ուսումնասիրու-թյուններ են կատարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգի գործունեության մասին հանրությանը իրազեկելու նպատակով հանձնաժողովը շարունակաբար իր ինտերնետային էջում (www.psrc.am) հրապարակում է լիցենզավորված ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

5.Կարգավորվող ընկերությունների գործունեության մոնիթորինգ և վերահսկողություն

2005 թվականին հանձնաժողովի որոշմամբ հաստատվել են բնական գազի մատակարարման և օգտագործման նոր կանոնները (ԳՄՕԿ), որոնցում, պահպանելով ժամանակավոր կանոններով սահմանված առևտրային

հարաբերությունների սկզբունքները, ամրագրվել են գազասպառման համակարգի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված՝ սպառողների և մատակարարի իրավունքներն ու պարտավորությունները, հստակեցվել են գազամատակարարման ընդհատման, սահմանափակման և դադարեցման դեպքերը, գազամատակարարման վերսկսման ընթացակարգերը, բաժանորդներին տեղեկացման ձևերը և ժամկետները:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետ համատեղ մշակվել և հանձնաժողովի որոշումներով հաստատվել են «Բնական գազի հաշվառքի սարքերի փոխարինման, վերականգնման և ստուգաչափման ծախսերի հաշվարկի մեթոդիկան», բնակիչների ներտնային և բազմաբնակարան շենքերում գործող կազմակերպությունների գազասպառման համակարգերի շինհավաքակցման աշխատանքներ իրականացնող և տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպու-թյունների ընտրության չափորոշիչները:

2005 թվականին մշակվել և հաստատվել են խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի չափանիշների սահմանման, այդ չափանիշների մոնիթորինգի կարգը և ծառայությունների մատուցման որակի չափանիշների ներդրման և մոնիթորինգի ժամանակացույցը:

Մշակվել և հաստատվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողների սահմանազատման կետերում թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվելիք տեղեկատվության ձևերը: Հանձնաժողովի որոշումներով հաստատվել են նաև Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման և էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներ-գետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգերը:

Փոքր հզորությամբ (մինչև 100 կՎտ) ինքնավար արտադրողների համար գործունեության բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով 2005 թվականին մշակվել և հաստատվել է վերականգնվող էներգառեսուրսներ օգտագործող ինքնավար արտադրողների միկրոէլեկտրակայանների և էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի կարգը: Մշակվել և հաստատվել են նաև ջրային համակարգում լիցենզավորված գործունեություն իրականացնող «Շիրակ-

ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներից է կարգավորվող ոլորտների լիցենզավորված անձանց լիցենզիաների պայմանների կատարման վերահսկումը: Անհրաժեշտ է նշել, որ այդ ուղղությամբ իրականացվող բոլոր ուսումնասիրություններին մասնակցել են նաև սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Լիցենզավորված ընկերություններում 2005 թվականին անց է կացվել մոնիթորինգ, որի ընթացքում հայտնաբերվել են նրանց գործունեությունում առկա թերությունները և տրվել դրանց վերացմանն ուղղված համապատասխան հանձնարարականներ: Այսպես, Արմավիրի «Նոր ակունք» ՓԲԸ-ում և Երևանի «Ձրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ում անցկացված մոնիթորինգը նպատակ է հետապնդել գնահատելու ընկերությունների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարումը:

Կատարվել է նաև «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից բնական գազի հոտավետացման (օդորիզացման) գործընթացի և տեխնիկական նորմերի պահպանման ուսումնասիրություն:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետությունում փոքր հիդրոէներգետիկայի բնագավառի զարգացման պետական քաղաքականության իրականացմանն ուղղված աշխատանքները: Այդ առումով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման լիցենզիա ստացած անձանց կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի վերլուծության արդյունքում վեր են հանվել ու շտկվել այն հիմնական թերությունները, որոնք բնութագրական էին դրանց մեծ մասի համար և որոշակի խոչընդոտներ էին հարուցում աշխատանքները նախատեսված ժամկետներում ավարտելու հարցում:

Մշակվել է «Քաշաթաղի էլեկտրացանցի արդյունավետ տնտեսական գործունեության ապահովմանն ուղղված 2005 թվականի ներդրումների և ֆինանսական հոսքերի ծրագիրը»: Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունների համագործակցության միջկառավարական հանձնաժողովին է ներկայացվել «Էներգացանցնախագիծ» ՓԲԸ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի բաշխիչ ցանցի վիճակի ուսումնասիրմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառումների արժեքի

գնահատման վերաբերյալ տեղեկատվություն, տեղեկանքներ են պատրաստվել 2005 թվականի ընթացքում Քաշաթաղի շրջանում էլեկտրաէներգիայի սպառման և կատարված ներդրումների, ինչպես նաև Քաշաթաղի էլեկտրացանցի 2004-2005 թվականների տնտեսական գործունեության փաստացի ցուցանիշների համեմատության վերաբերյալ:

6. Ներդրումային դաշտի կարգավորում

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից են լիցենզավորված գործունեության բարելավման նպատակով կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացված ներդրումային ծրագրերի ուսումնասիրությունը և ապագա սակագների հաշվարկներում դրանց (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման վերաբերյալ համապատասխան որոշումների ընդունումը:

2005 թվականի փետրվար ամսին համապատասխան որոշումներով հանձնաժողովը համաձայնություն է տվել էլեկտրաէներգիայի և բնական գազի բաշխման գործունեություն իրականացնող երկու խոշոր ընկերությունների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների ներկայացրած առաջին եռամյա՝ 2005-2007 թվականներին իրականացվելիք ներդրումային ծրագրերին: Համաձայնություն է տրվել նաև «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2005-2008 թվականների և «Իջևան ՀԷԿ» ՍՊԸ-ի «Իջևան» փոքր ՀԷԿ-ի փաստացի հզորության ավելացմանն ուղղված ներդրումային ծրագրերին: Քննարկվել են նաև «Նոր Ակունք», «Բարձրավոլտ էլեկտարացանցեր» և «Համակարգի օպերատոր» ՓԲԸ-ների կողմից միզազգային կազմակերպությունների վարկային միջոցների հաշվին իրականացվելիք ներդրումային ծրագրերը և հանձնաժողովի համապատասխան որոշումներով ամրագրվել են այդ վարկերի վերադարձման մեխանիզմները:

Մշակվել և հաստատվել են կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումների վերաբերյալ հաշվետվությունների ձևերը, որոնք թույլ են տալիս պատշաճ վերահսկողություն սահմանելու ներդրումային ծրագրերի իրականացման ուղղությամբ և գնահատելու փաստացի ներդրումների ծավալը:

2005 թվականին ուսումնասիրվել և համապատասխան վերլուծական տեղեկանքներ են կազմվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների 2004 թվականի ներդրումային գործունեության արդյունքների մասին: Հանձնաժողովը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի

2004 թվականի ներդրումային գործունեության արդյունքները գնահատել է ոչ բավարար, իսկ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ուշադրությունը հրավիրել համաձայնեցված ներդրումային ծրագրի բոլոր ուղղությունների կատարման վրա:

Հաշվետու տարում հանձնաժողովն ավարտել է կարգավորվող ընկերությունների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների կարգերի ներդրման գործընթացը: Արդեն գործում է «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի գնումների կարգը, իսկ ոլորտի մյուս խոշոր ընկերությունները գնումներն իրականացնում են ,Գնումների մասինե ՀՀ օրենքով:

Այս գործընթացի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով 2005 թվականին հանձնաժողովի համապատասխան որոշմամբ հաստատվել է կատարված գնումների մասին հանձնաժողով ներկայացվող հաշվետվության մեկ միասնական ձև: Ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների և «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված գնումների եռամսյակային տեղեկատվությունները, կազմվել են համապատասխան տեղեկատվական բազաներ: 2005 թվականին հանձնաժողովը նախազգուշացրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ իր կողմից կազմակերպված մրցույթներից մեկը գնումների կարգի խախտմամբ իրականացնելու համար:

Հաստատվել են էլեկտրաէներգետիկայի ոլորտում սպառողներին մատուցվող ծառայությունների որակի մոնիթորինգի կարգը, սպառողների սահմանազատման կետերում թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների, սպառողների դիմում-բողոքների և հարցադրումների մասին տեղեկատվական ձևերը: Ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող եռամսյակային տեղեկատվությունները, համալրվել են առկա տեղեկատվական բազաները, և բոլոր տվյալները հրապարակվել հանձնաժողովի վեբ կայքում: Այս աշխատանքների իրականացման նպատակը էլեկտրաէներգետիկայի ոլորտում սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բազիսային ցուցանիշների հաստատումն ու նպատակային մեծությունների (կարճաժամկետ և երկարաժամկետ) սահմանման սկզբունքների և մեխանիզմների մշակումն է: Հանձնաժողովը նախատեսում է 2006 թվականին հաստատել ծառայությունների որակի բազիսային ցուցանիշները, ինչը թույլ կտա «Հայաստանի

էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող ներդրումային ծրագրերը առավելագույնս նպատակաուղղել մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառի զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու հետ մեկտեղ, հանձնաժողովը հետևում և «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տույժեր է կիրառում կառուցման լիցենզիաների պայմանները խախտող ընկերությունների նկատմամբ, որոնք 2005 թվականին տասն էին: Բացի այդ, լրամշակվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման նոր կարգը, որի համաձայն կառուցման լիցենզիայի գործողության ժամկետում փոքր ՀԷԿ-ի կառուցումը չավարտելու, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում ընկերության ֆինանսական երաշխիքը լրիվ կամ 50 տոկոսով փոխանցվում է ՀՀ պետական բյուջե: Այս համատեքստում 2005 ընթացքում հանձնաժողովի որոշումներով վեց իրավաբանական անձինք ՀՀ պետական բյուջե են փոխանցել 10.25 մլն դրամ:

2005 թվականին ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության տարածքում փոքր ՀԷԿ-երի կառուցման աշխատանքների ընթացքը և կազմվել համապատասխան վերլուծական տեղեկանք: Փոփոխություն է կատարվել հողմա-կայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկման համար անհրաժեշտ ցուցանիշի սահմանման մասին որոշման մեջ՝ սակագնի գործողության ժամկետը սահմանելով 15 տարի՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից:

7.Հեռահաղորդակցության բնագավառ

Հանձնաժողովը 2005 թվականին գործուն մասնակցությունն է ցուցաբերել «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքներին, նկատի ունենալով, որ օրենքի 66-րդ հոդվածի համաձայն՝ 2006 թվականի հունվարի 1-ից էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման գործառույթները փոխանցվելու էին հանձնաժողովին:

Մեծածավալ աշխատանքներ են տարվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման գործընթացի համար անհրաժեշտ առաջնահերթ իրավական ակտերի, մասնավորապես՝ վեճերի լուծման, գործունեության

լիցենզավորման և ռադիոհաճախականությունների թույլտվությունների տրամադրման կարգերի նախագծերի մշակման ուղղությամբ:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով հանձնաժողովը ակտիվորեն մասնակցել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին, այդ առնչությամբ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կազմակերպած քննարկումներին՝ ներկայացնելով իր դիրքորոշումը:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունից ընդունել է էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորմանն առնչվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

8. Աշխատանքը սպառողների հետ

2005 թվականին շարունակվել են սպառողների հետ տարվող ամենօրյա աշխա-տանքները: Տարվա ընթացքում սպառողներից ստացվել են 557 հարցադրումներ, բողոքներ, որոնցից 95-ը՝ գրավոր , 416-ը՝ հրատապ հեռախոսով և 46-ը՝ սպառողների ընդունելության ընթացքում, ընդ որում, 525-ը ստացվել է բնակիչներից, 32-ը՝ իրավաբանական անձանցից կամ այլ կազմակերպություններից:

Հարցադրումներից և բողոքներից 381-ն ստացել են դրական լուծում, 7-ի վերաբերյալ մատակարար կազմակերպություններում անց են կացվում ուսումնասիրություններ, 17 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 152-ին տրվել են պարզաբանումներ՝ ըստ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի:

Սպառողների բողոքները տեղում ուսումնասիրելու նպատակով էլեկտրա-էներգիայի, գազի, խմելու ջրի մատակարարների հետ համատեղ իրականացվել են ստուգայցեր, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ խնդրահարույց հարցերը կարգավորելու ուղղությամբ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են սպառողների շահերի պաշտպանությանը և նրանց բողոքներին առնչվող քննարկումներ:

ԶԼՄ-ներով ստացվել են 88 ահազանգեր, որոնց մի մասի վերաբերյալ հանձնաժողովի ստորաբաժանումները մատակարար ընկերությունների հետ համատեղ կազմակերպել են քննարկումներ, հետամուտ եղել բարձրացված խնդիրների լուծմանը, իսկ մյուս մասին մամուլով կամ այլ միջոցներով տրվել են համապատասխան պարզաբանումներ:

9. Գործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ

2005 թվականին հանձնաժողովը շարունակել է գործուն քայլեր իրականացնել իր գործունեությունն ավելի հրապարակային և թափանցիկ դարձնելու ուղղությամբ: Յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 1-ը հանձնաժողովը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակում է հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության հաշվետվությունը:

Զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար ծանուցումներ և հաղորդագրություններ են տրվել հանձնաժողովի այն բոլոր նիստերի վերաբերյալ, որտեղ քննարկվել են անմիջապես սպառողների շահերին առնչվող որոշումների նախագծեր, իսկ նիստերի ավարտից հետո լրագրողների համար կազմակերպվել են ճեպազրույցներ:

Հանձնաժողովի նախագահը, անդամները, աշխատակազմի մասնագետները հանձնաժողովի գործառույթների, իրավասությունների, հասարակական հնչեղություն ունեցող որոշումների շուրջ, ինչպես նաև սպառողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, հաշվետու տարվա ընթացքում զանգվածային տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար հանդես են եկել ելույթներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

2005 թվականի սեպտեմբեր ամսին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ԱՊՀ անդամ երկրների էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ընկերակցության՝ Երևանում հրավիրված նիստը կազմակերպվել է պատշաճ հրապարակայնության ապահովմամբ, լայնորեն լուսաբանվել են սակագնային կոմիտեի աշխատանքները:

Հանձնաժողովում ձևավորվել է «Հետադարձ կապի» միջոցով արդյունավետ աշխատանքի պրակտիկա. տպագիր մամուլի ամենօրյա դիտարկման արդյունքում առանձնացված ահազանգերի վերաբերյալ ընկերությունների հետ կազմակերպվել են համատեղ քննարկումներ, անհրաժեշտության դեպքում՝ վերջիններիս պաշտոնական պարզաբանումները հրապարակվել են թերթերում: Ամենօրյա աշխատանքի արդյունքում հարստացվել է «Ահազանգերի տեղեկատուն»,

առանձնացվել ըստ ոլորտների: Հանձնաժողովի կողմից կարգավորվող ծառայությունների մասին թերթերի հետաքրքիր հրապարակումների, էլեկտրոնային լրատվամիջոցների թողարկած նյութերի ընտրանին ամեն օր ներկայացվել է աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների և հանձնաժողովի գործունեության մասին հանրության կարծիքը, գնահատականը:

Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերով պարբերաբար թարմացվել է ինտերնետային կայքը, որում գործում է նաև «Թեժ գիծ»-ը՝ հնարավորություն ընձեռելով սպառողներին պարբերաբար տեղեկացնել մատակարարների պարտականությունների ոչ պատշաճ կատարման մասին, պարզաբանումներ ստանալ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:

Զանգվածային լրատվամիջոցների համար, «ՀայՌուսգազարդ» ընկերության հետ համատեղ, հունիս ամսին Ծաղկաձորում կազմակերպվել են սեմինարներ, որտեղ ելույթ են ունեցել հանձնաժողովի փոխնախագահն ու աշխատակազմի մասնագետները, պարզաբանումներ տվել լրագրողներին հետաքրքրող հարցերին:

10. Գործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովն արդյունավետ համագործակցել է «Սպառողների իրավունքների պաշտպանություն», «Սպառողների ասոցիացիա», «Բնակարանային-կոմունալ ոլորտի աշխատողների միություն», «Համատիրությունների նախագահների ասոցիացիա», «Հասարակական պաշտպանների միություն», «Քարավան-88», «Ազատություն և իրավունք» հասարակական կազմակերպությունների հետ, համատեղ քննարկելով կարգավորման ոլորտի հասարակական հնչեղություն ունեցող բոլոր խնդիրները:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցել են Երևանի ,Զրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարման մոնիթորինգին, որի արդյունքում համատեղ ձևավորվել է համապատասխան գնահատականը:

Շարունակվել են աշխատանքները գազամատակարարման և ջրամատակարարման ոլորտների սպառողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ուղեցույցներ մշակելու ուղղությամբ, որոնք նախատեսվում է տպագրել և անհատույց տրամադրել սպառողներին:

11.Գործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

2005 թվականին հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի կարգավորող մարմինների կողմից ստեղծված կարգավորող մարմինների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) սակագնային և լիցենզիոն կոմիտեների հերթական հանդիպումներին, էներգետիկայի կարգավորող տարածաշրջանային ընկերակցության տարեկան հանրահավաքին: Հանձնաժողովի հինգ աշխատակիցներ մասնակցել են ընկերակցության Բուդապեշտում կազմակերպված ամառային դպրոցի դասընթացներին: Ընկերակցության աշխատանքների շրջանակներում, Ուկրաինայի կարգավորող մարմնի փորձի ուսումնասիրման նպատակով հանձնաժողովի երեք աշխատակիցներ մասնակցել են Կիևում կազմակերպված խորհրդակցությանը:

Հանձնաժողովի աշխատակազմի մի քանի մասնագետներ մասնակցել են ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի հանրային ծառայությունները կարգավորող հանձ-նաժողովի մասնագետների կողմից Երևանում կազմակերպված ջրային համակարգի կարգավորման խնդիրների վերաբերյալ դասընթացներին, ինչպես նաև ԱՄՆ–ի Փենսիլվանիա նահանգի հեռահաղորդակցության բնագավառը կարգավորող հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարներին:

Հանձնաժողովի երեք աշխատակիցներ շարունակում են մասնակցել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ երկրների միջև կնքված գործընկերության և համագործակցության իրականացման ազգային ծրագրերի մշակման աշխատանքներին:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը

Սփոր– ներկայացվում են հանձնաժողովի 2005 թվականի հաստատված – ճշգրտված բյուջեի ֆինանսավորման – փաստացի ծախսերի տվյալները.

N	Ծախսի անվանումը	Հաստատված բյուջե /հազ.դրամ/	Տարեկան ճշտված բյուջե /հազ.դրամ/	Ֆինանսավորում /հազ.դրամ/	Փաստացի ծախս /հազ.դրամ/
	Ընդամենը ծախսեր	**352263.6**	**352263.6**	**341012.0**	**339991.4**
1.	**Աշխատավարձ – աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ**	**270972.0**	**270972.0**	**270972.0**	**270971.3**
2.	**Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ**	**26364.6**	**26364.6**	**25174.8**	**24375.7**
3.	**Գրասենյակային ապրանքներ – նյութեր**	**9194.5**	**9194.5**	**9134.4**	**9187.0**
4.	**Գործուղումներ, ծառայողական ուղ– որություններ**	**9880.0**	**9880.0**	**3179.6**	**2768.8**
5.	**Տրանսպորտի պահպանման ծախսեր**	**5644.2**	**5644.2**	**5644.0**	**5644.0**
6.	**Կապի ծառայությունների վճար**	**4757.3**	**4757.3**	**4214.8**	**4197.0**
7.	**Վառելիքի – ջեռուցման ծախսեր**	**1361.5**	**1361.5**	**946.5**	**814.3**
8.	**Էլեկտրաէներգիայի ծախսեր**	**4240.0**	**4240.0**	**3398.8**	**3684.8**
9.	**Ջրմուղ- կոյուղուց օգտվելու վարձ**	**580.0**	**580.0**	**123.3**	**140.8**
10.	**Այլ կոմունալ ծախսեր**	**220.0**	**220.0**	**-**	**-**
11.	**Հարկեր, տուրքեր – այլ պարտադիր վճարների կատարման ծախսեր**	**200.0**	**200.0**	**57.0**	**57.0**
12.	**Ներկայացուցչական ծախսեր**	**849.5**	**849.5**	**849.5**	**849.5**
13.	**Այլ ծառայությունների ձեռք-բերման ծախսեր**	**4000.0**	**4000.0**	**3665.2**	**3649.0**
14.	**Տրանսպորտային միջոցների ձեռքբերում**	**11000.0**	**11000.0**	**11000.0**	**11000.0**
15.	**Ակտիվների ձեռքբերում**	**3000.0**	**3000.0**	**2652.2**	**2652.2**

2005 թվականին կատարված ֆինանսավորումից 89.9 հազ. դրամ վերադարձվել է պետական բյուջե: